ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Գյուղատնտեսության աշխատողի օրվա առթիվ

13.10.2019

Գյուղատնտեսության ոլորտի հարգելի աշխատակիցներ, սիրելի ֆերմերներ, գիտնականներ ու գործարարներ,
Պատիվ ունեմ շնորհավորելու բոլորիդ մասնագիտական տոնի առթիվ:

Լինելով գյուղատնտեսական ուղղվածությամբ մարզի ղեկավար և ամենօրյա առնչություն ունենալով ոլորտի խնդիրներին, ընթացիկ հարցերին՝ ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, որ մարզում լուրջ քայլեր են կատարվում գյուղատնտեսությունը զարգացման ճիշտ ուղու վրա դնելու համար: Իսկ այդ գործին իրենց ամենօրյա անխոնջ ու քրտնաջան աշխատանքով մեծ նպաստ են բերում գյուղատնտեսության ոլորտի գիտակները՝ սկսած հողի մշակից:

Ի ուրախություն ինձ և բոլորիս՝ կարող եմ փաստել, որ Արմավիրի մարզում վերջին մեկ տարվա ընթացքում գյուղատնտեսության ոլորտում լուրջ առաջընթաց ենք գրանցել. կրկնապատկվել են ջերմոցները և ջերմատները, հակակարկտային ցանցապատ տարածքները, կաթիլային ոռոգվող հողատարածքները և սառնարանային տնտեսությունները:

Ոլորտում կարևորագույն աշխատանքներ են տարվել նաև պետական աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալություն», «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» և «Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրերի շրջանակում:

Չթվարկելով բոլոր ձեռքբերումներն ու նախատեսվող ծրագրերը՝ վստահեցնեմ, որ կառավարության հովանու ներքո արվում է հնարավորը՝ գյուղատնտեսության ոլորտին իրական աջակցություն ցուցաբերելու, գյուղացու և վերամշակողի գործունեության համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Գյուղատնտեսության ոլորտի հարգելի ներկայացուցիչներ, սիրելի գործընկերներ, կրկին շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ՝ ցանկանալով քաջառողջություն, գործնական հաջողություններ ու ձեռքբերումներ: